տալղուճ են, որ չկայ արարածս նման նոցա. խարապաթախ կու նմանին. զոր եւ աչօք տեսաք ի ցորեկի. մտանէին ի դեռն պահ մի կենային եւ այլ տեղ կ'ելնէին. եւ թէ մի դրամ ձգես ի դեռն՝ մտնուն, դտնան եւ հանեն. եւ զիշերն հետ կէմուն շրջին որպէս ձկներ, եւ զողանան զմարդիկ թէ ննջեն. եւ այլ չկարես տեսնուլ զնա:

Իսկ մեք եղերօք երկու օրն հասաք ի հասապա մի եւ սկէլէ՝ ՊՈՒԼԱՔ անուն. որ եւ սա զեղեցիկ Մսրայ սքէլէ է. եւ դեռն աստի այլ տեղ երթայ: Եւ մեք ելաք նաւէն. վարձեցաք իշվան. զի անտի մինչ Մըսիր չարեկ միլ է. եւ ջուր աստի զնայ ի Մըսր. եւ ասին ԽՈ ուղտ ջուր կրէ աստի:

ՄՍԸՐ = ԳԱՀԻՐԷ

Եւ իբրեւ մտաք ի Մսըր՝ այնչափ սկսաք զնալ, որ պէղրէցաք. երկու ժամն ապա հասաք Հայոց թաղն. քանզի յոյժ մեծ էր քաղաքն եւ մարդաշատ:

Կայր եկեղեցի մի Խպտու. եւ անդ տված էր մատուռ մի Հայոց. եւ վերեւն վերնատուն կանանց. եւ այլ վեր՝ կարգաւորաց տեղիք բնակութեան: Կայր Նիկիսարցի քահանայ մի[3]

188 *եալ*:

[3] 1613ին կը յիշուի հոս «Մկրտիչ երէց Տիւրիկեցի», որ Սարգիս դպիր Լեհացւոյ հետ կը նորոգէ Բեբլինի Թ. 57 ձեռագիրը Մաշտոցը «ի ժամանակս խոնամայ Իպրահիմչային եւ Ֆարմանին, նոցա ձեռնտուութեամբն եւ կամակցութեամբն»: Հմմտ. Հանդ. Ամս., 1932, էջ 454, ծ. 11: